ԴԻՄՈՐԴ
2023

ԵՊՀ-Ի
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 3

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 4

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 5

ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ 6

ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ (ԶԵՂՉ) . . . 7

2023 Թ. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը ՀՀ կառավարության որոշմամբ հիմնադրվել է *1994*թ. սեպտեմբերի *19*-ին՝ նպատակ ունենալով տարածաշրջանում ստեղծել արդի և կայուն գիտա-մշակութային միջավայր: Իր գործունեության ընթացքում բուհը տվել է ավելի քան *7000* շրջանավարտ, որոնց մեծամասնությունը հաջողությամբ աշխատում է հայագիտության, մշակույթի, հումանիտար, սոցիալ-տնտեսական և բնական գիտությունների ոլորտներում:

Կրթօջախում դասավանդում են բարձրակարգ դասախոսներ, այդ թվում՝ Երևանի պետական համալսարանից և ՀՀ առաջատար բուհերից հրավիրված գիտությունների դոկտորներ ու պրոֆեսորներ:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, առավելապես փոխանցումը և տարածումն է հայագիտության, մշակույթի, հումանիտար, սոցիալ-տնտեսական և բնական գիտությունների ուղղություններով:

Իրականացնելով աշխատաշուկայում պահանջված բակալավրական ու մագիստրոսական մասնագիտությունների կրթական ծրագրեր**,** ստեղծելով ուսանողակենտրոն միջավայր**,** կիրառելով ուսուցման ժամանակակից եղանակներ և որակի ապահովման կառուցակարգեր՝ մասնաճյուղը նպաստում է տարածաշրջանը անհրաժեշտ մասնագետներով համալրելուն և մշակութային կյանքի զարգացմանը:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համալսարանի զարգացման ճանապարհային քարտեզը ենթադրում է հետևյալ առաջնահերթությունները.

1. «Թվային համալսարան»-ի զարգացում համապատասխան կրթական ծրագրերի իրականացման միջոցով՝ ըստ գիտական և կրթական զարգացման բոլոր ուղղությունների՝ ստեղծելով լաբորատորիաներ, կիրառելով նորարարական տեխնոլոգիաներ,
2. բիզնես համագործակցություն տարածաշրջանային ինքնակառավարման մարմինների և գործարար հանրության հետ՝ տարածաշրջանային խնդիրներ լուծելու ունակ բարձրորակ կադրերի պատրաստման համար,
3. համագործակցության զարգացում արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ,
4. պրոֆեսորադասախոսական կազմի համար մասնագիտական, ստեղծագործական և գիտական աճի ապահովում,
5. ուսանողների ստեղծարար և սոցիալական ներուժի զարգացում երիտասարդական նորարարական միջավայրի ստեղծման միջոցով, նրանց զարգացման և առաջընթացի ապահովում բազմազան սոցիալ-մշակութային պրակտիկաների, փորձարարության և ոչ ֆորմալ կրթության հիման վրա,
6. համալսարանի մրցունակության և վարկանիշի բարձրացում կրթության ճկուն և նորարարական կազմակերպման շնորհիվ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ֆակուլտետն ունի չորս ամբիոն՝

- Հայոց պատմություն և հասարակագիտություն
- Մանկավարժություն և հոգեբանություն
- Հայոց լեզու և գրականություն
- Օտար լեզուներ

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ֆակուլտետն ունի երկու ամբիոն՝

- Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների
- Ընդհանուր մաթեմատիկա և բնագիտություն

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ֆակուլտետն ունի երկու ամբիոն՝

- Ընդհանուր տնտեսագիտություն
- Տուրիզմի կառավարում և մշակութաբանություն

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ֆակուլտետն ունի երկու ամբիոն՝

- Գծանկար, գունանկար և քանդակ
- Դեկորատիվ-կիրառական արվեստ և դիզայն

2022թ. ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղը ԱՄՆ-ի Այովայի համալսարանի հետ ունի համագործակցության հուշագիր:

Հուշագրի նպատակն է կրթական և գիտահետազոտական ծրագրերի ոլորտում համատեղ համագործակցության զարգացումը, դասախոսների և ուսանողների փոխադարձ ակադեմիական փոխանակման, գիտաժողովներին, սիմպոզիումներին մասնակցության, գիտական հրապարակումների փոխանակման խրախուսումը:

2022թ. ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի և Ռուսաստանի պետական մասնագիտական-մանկավարժական համալսարանի միջև կնքվել է համագործակցության հուշագիր:

Հուշագրի նպատակն է իրականացնել դասախոսների և ուսանողների փոխանակում, զարգացնել համատեղ հետազոտական և ուսումնամեթոդական հրատարակությունների առկա դրական փորձը, կիրառել ուսուցման հատուկ համակցված ձևեր, համատեղ դասագրքերի, ուսումնական նյութերի մշակում, համատեղ դասընթացների մշակում

2021թ. ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի և ՀՀ Կենտրոնական բանկի միջև կնքվել է համագործակցության հուշագիր:
Հուշագրի նպատակն է ՀՀ-ում տնտեսագիտական կրթության զարգացման և արդիականացման հարցերի շրջանակում ապահովել անհրաժեշտ համագործակցություն ՀՀ Կենտրոնական բանկի և ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի միջև:

2019 թ. ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի, ՀՀ Տավուշի մարզպետարանի և «Գյումրիի Տեղեկատվական Տեխնոլոգիաների Կենտրոն»-ի միջև կնքվել է համագործակցության հուշագիր:

Կողմերը համաձայնություն են ձեռք բերել միավորել են իրենց ջանքերը՝ նպաստելու ՀՀ Տավուշի մարզում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման գործընթացին:

2021թ. ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի և “Armenian Volunteer Network” ԱՄՆ–ում տեղակայված կրթական միջազգային կազմակերպության միջև կնքվել է համագործակցության հուշագիր:

Հուշագիրը նպատակաուղղված է Հայաստանում կրթության խթանմանը և բարելավմանը, միջազգային ակադեմիական կապերի ընդլայնմանը, գաղափարների և գիտելիքների փոխանակմանը, կամավորության խթանմանը և զարգացմանը:

2021թ. ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի և Երևանի «Գլաձոր» համալսարանի միջև կնքվել է համագործակցության հուշագիր:

Հուշագրի նպատակն է կրթական և գիտահետազոտական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումը և համագործակցության ծրագրերի իրականացումը:

2019թ. ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի և Ռուսաստանի Դաշնության Գժելի պետական համալսարանի միջև կնքվել է համագործակցության պայմանագիր:

Պայմանագիրը նպատակաուղված է կրթական և գիտական ծրագրերի համատեղ համագործակցությանը, երկկողմանի համատեղ կոնֆերանսների, սեմինարների, սիմպոզիումների կազմակերպմանը, դասախոսների և ուսանողների փոխադարձ ակադեմիական փոխանակմանը, գիտական տեղեկատվության, ուսումնական նյութերի փոխանցմանը և գիտական ամսագրերում հրապարակումների հնարավորությունների ապահովմանը:

2021թ. ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի և «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան»-ի միջև կնքվել է համագործակցության հուշագիր:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ



ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ (ԶԵՂՉ) ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Առաջին կուրս ընդունված ուսանողներին համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրվում է՝

ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող հետևյալ խմբերին՝

50%	մինչև **5,00** միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին
60%	մինչև **5,01-10,00** միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին
70%	մինչև **10,01-15,00** միավորովբարձրը անապահովության միավոր ունեցող ընտանիքիանդամ հանդիսացող ուսանողներին
80%	մինչև **15,01-20,00** միավորովբարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքիանդամ հանդիսացող ուսանողներին
90%	մինչև **20,01**-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքիանդամ հանդիսացող ուսանողներին

50% Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշման թիվ 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքների բնակավայրերում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես բնակվող ու տվյալ համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունն ավարտած ուսանողներին:

մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին:

առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սովորող՝ երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին:

100%	1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները կամ ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք (երեխաները)
100%	առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխաները
100%	ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակում ունեցող զինվորական կենսաթոշակի իրավունքունեցող նախկին զինծառայողները, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների ծնողները,ամուսինը (կինը), մինչև 27 տարեկան զավակները

ԵՊՀ-Ի ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ

Առաջին կուրս ընդունված և ԵՊՀ-ի կողմից անցկացվող օլիմպիադաներում 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմի արժանացած ուսանողներին՝

50%	**1**-ին կարգի դիպլոմի արժանանալու դեպքում
40%	**2**-րդ կարգի դիպլոմի արժանանալու դեպքում
30%	**3**-րդ կարգի դիպլոմի արժանանալու դեպքում

2023թ. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մասնագիտություն	Կրթական ծրագիր	Ընդունելության քննություններ				անվճար	վճարովի	Ուսման վարձը (ՀՀ դրամ)
		մրցութային			ոչ մրցութ.			
1	2	3	4	5	6	7	8	9
Բնական գիտությունների ֆակուլտետ								
Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգլ(գ)		ՀԼԳ(գ)*	10	25	450000
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ								
Ընդհանուր մանկավարժություն	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ) կամ Օտ(գ)			5	20	400000
Մասնագիտական մանկավարժություն	Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)			2	18	420000
Պատմություն	Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ)			3	27	390000
Հայոց լեզու և գրականություն	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	Օտլ(գ)			4	16	360000
Օտար լեզու և գրականություն	Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)			4	31	450000
	Ֆրանսերեն լեզու և գրականություն	Հլգ(գ)	Ֆրլ(գ) կամ Անգլ(գ)			2	8	450000
Հոգեբանություն	Հոգեբանություն	Հլգ(գ)	Օտլ(գ) կամ Կ(գ)			2	18	400000
Տնտեսագիտական ֆակուլտետ								
Ֆինանսներ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*	5	35	500000
Զբոսաշրջություն	Զբոսաշրջություն	ՀԼԳ(գ)	Օտլ(գ) կամ Մ(գ)			3	22	400000
Կիրառական արվեստի ֆակուլտետ								
Դիզայն	Դիզայն	Գծն	Կոմպ.		ՀԼԳ(գ)*	2	13	370000
Կիրառական արվեստ	Դեկորատիվ-կիրառական արվեստ	Գծն	Կոմպ.		ՀԼԳ(գ)*	3	12	370000

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

*Փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

ՀԵՏԱԴԱՐԱՁ ԿԱՊ

ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան, Ուսանողական 3

www.facebook.com/ysuib

Հեռ.՝ /0263/4 00 51, (+374 94) 03 21 12

ephimmkpk@gmail.com

http://ijevan.ysu.am/: